

[1] 'Խուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
12	Հուլիս	2019 թ.		Բ	5702333053
[4] Մատուցման ամսաթիվը				Ըզգրովող հաշիվ վավերագրի	
12	Հուլիս	2019 թ.	Սերիա	Համար	
			Ըզգրովող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ		
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
[7.1] ՀԴՄ կտրոնի համար					

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	0	1	0	6	3	3	7
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	ԿՐԹԱԲԱՆ ՍՈՆԱ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)							
[11] Բանկային տվյալները	ԱրԴԻ Բանկ ՓԲԸ		N 11813000406200					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ Բաղրաբանյան 71 16							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	5	0	6	6	3	4
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀՀ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ Ֆին. նախ. գործ. վարչ.		N 900011180081					
[18] Գտնվելու վայրը (քնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ Խորհրդարանի 6							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն		Համար					
	Լիազորագիր		Ամսաթիվ					

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№№	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (ռավանդակությունը)	Չափի միավորը	Մտնույն ծավալը կամ ժամանակահատվածը	Միավորի գինը	Զեղչ(%)	Մրժեքը
1	2	3	4	5	6	7
1	Թարգմանչական ծառայություն՝ գերմաներեն հայերեն գրավոր	էջ	2	3200		6400
2	Թարգմանչական ծառայություն՝ հայերենից վրացերեն գրավոր	էջ	148	2400		35200
3	Թարգմանչական ծառայություն՝ գերմաներենից հայերեն գրավոր	էջ	2	3200		6400
Ընդամենը						368000

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)
HOVHANNISYAN SONA 5808870623

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող
GRIGORYAN SUSANNA 7403690397

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

12/07/2019 15:25:33

16/07/2019 16:35:32

ՈՐՈՇՈՒՄ
թարգմանիչ հրավիրելու մասին

10.06.2019թ.

ք. Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության (Վարչություն) ավագ դատախազ Ա. Հովհաննիսյանս, ուսումնասիրելով №13144415 քրեական գործով հետախուզվող ՄԱՐՏԻԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՆԵՐՍԵՍՅԱՆԻ վերաբերյալ ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով ստացված հայտագիրը,

ՊԱՐՁԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) գլխավոր դատախազությունը «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի համաձայն 08.08.2018թ. դիմել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության (այսուհետ՝ ԳԴՀ) իրավասու մարմիններին՝ №13144415 քրեական գործով հետախուզվող ՄԱՐՏԻԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՆԵՐՍԵՍՅԱՆԻՆ քրեական հետապնդման ենթարկելու նպատակով ՀՀ իրավասու մարմիններին հանձնելու միջնորդությամբ:

10.06.2019թ. ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչությունից ստացված գրությունը՝ որին կից ուղարկվել է ԳԴՀ իրավասու մարմնի հայտագիրը՝ գերմաներեն լեզվով:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, իսկ ԱՆԱՀԻՏ ԷԴԻԿԻ ԳՅՈՒԼՉԱՏՅԱՆԸ համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 83-րդ հոդվածով, «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Մ.Ա.ՆԵՐՍԵՍՅԱՆԻ վերաբերյալ ՀՀ արտաքին գործերի նախարարությունից 08.05.2019թ. ստացված գրությանը կից ուղարկված հայտագրի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով՝ որպես թարգմանիչ հրավիրել ԱՆԱՀԻՏ ԷԴԻԿԻ ԳՅՈՒԼՉԱՏՅԱՆԸ (անձնագիր AK սերիայի №0538399, դիպլոմ A №046826) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Միջազգային-իրավական համագործակցության
վարչության ավագ դատախազ



Ա. Հովհաննիսյան

Մտացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ
Անահիտ Գյուլզատյան



«10».....06..... 2019թ.

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

13.05.2019թ.

ք. Երևան

«Հ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության վարչության դատախազ Տ.Ենոքյանս, ուսումնասիրելով ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում քննված և մեղադրական եզրակացությամբ ստացված թիվ 50101018 քրեական գործը,

ՊԱՐԶԵՑԻ՝

«Հ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում քննված թիվ 50101018 քրեական գործն ըստ մեղադրանքի Դիմիտրի Ալեքսանդրի Անդրեևի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով, 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով, 329-րդ հոդվածի 2-րդ մասով, Սոփիո Զուրաբի Անդրեևայի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով, 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 8-րդ կետերով, 329-րդ հոդվածի 2-րդ մասով և Շոթա Գոչայի Մաղլակելիձեի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 334-րդ հոդվածի 1-ին մասով, 2019 թվականի մայիսի 10-ին մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության վարչություն:

«Հ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարությանը մասնակցող անձինք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունեն դատարանում հանդես գալու իրենց նախընտրած լեզվով, եթե ապահովում են հայերեն թարգմանությունը: Քրեական դատավարությանը մասնակցող մեղադրյալին, եթե նա չի տիրապետում հայերենին, դատարանը պարտավոր է պետական միջոցների հաշվին ապահովել թարգմանչի ծառայություններով, բացառությամբ երբ մեղադրյալը ցանկանում է իր հաշվին ապահովել թարգմանությունը»:

«Հ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին և պաշտպանին հանձնվում են թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները»:

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով մեղադրական եզրակացությունը ենթակա է հաստատման, իսկ մեղադրյալներ Դիմիտրի Ալեքսանդրի Անդրեևը, Սոփիո Զուրաբի Անդրեևան և Շոթա Գոչայի Մաղլակելիձեն չեն տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում են վրացերեն լեզվին և իրենց հաշվին թարգմանություն ապահովելու ցանկություն չեն հայտնել, ուստի մեղադրյալ Շոթա Մաղլակելիձեին հասցեագրված գրությունը, մեղադրական եզրակացությունը, այն հաստատելու մասին որոշումը մեղադրյալներին հասկանալի լեզվով նրանց հանձնելու համար և նշված փաստաթղթերը հայերենից վրացերեն թարգմանելու նպատակով անհրաժեշտ է որպես թարգմանիչ հրավիրել «Կրթարան Սոնա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թարգմանիչ Էդիտա Սամվելի Մուրադյանին (անձնագիր՝ AM0622038, տրված՝ 01.02.2012թ., վավերական

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

«20» հունիսի 2019թ.

ք. Երևան

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-հրավական համագործակցության վարչության (վարչություն) դատախազ Հ.Բաղայանս, ուսումնասիրելով թիվ 58213615 քրեական գործով հետախուզվող ՍԱՄՎԵԼ ՍՈՒՐԵՆԻ ԳՐԻՄԲԵՐԳԻ վերաբերյալ վարչությունում առկա փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) գլխավոր դատախազությունը «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի համաձայն 14.03.2019թ. դիմել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության (այսուհետ՝ ԳԴՀ) իրավասու մարմիններին՝ №58213615 քրեական գործով հետախուզվող ՍԱՄՎԵԼ ՍՈՒՐԵՆԻ ԳՐԻՄԲԵՐԳԻՆ քրեական հետապնդման ենթարկելու նպատակով ՀՀ իրավասու մարմիններին հանձնելու միջնորդությամբ:

20.06.2019թ. ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով ՀՀ գլխավոր դատախազությունում ստացվել է ԳԴՀ իրավասու մարմնի 506-12-531.00/61829 ARM փաստաթուղթը գերմաներեն լեզվով՝ Ս.Ս. ԳՐԻՄԲԵՐԳԻ վերաբերյալ:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, անհրաժեշտություն է առաջացել թարգմանել վերոնշյալ փաստաթուղթը՝ հայերեն:

Վերոգրյալի հիման վրա, նկատի ունենալով, որ Անահիտ Էդիկի Գյուլատյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ Վճռաբեկ դատարանի 04.05.2017թ. թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 83-րդ հոդվածով, «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածով,

ՈՐՈՇԵՑԻ

1. Ս.Ս. ԳՐԻՄԲԵՐԳԻ վերաբերյալ փաստաթղթի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Անահիտ Էդիկի Գյուլատյանին (անձնագիր AK սերիայի №0538399, Երևանի Բրյուսովի անվան լեզվաբանական պետական ինստիտուտի դիպլոմ A № 046826) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ

Թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

3. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի համաձայն՝ առանց դատախազի, քննիչի կամ հետաքննություն կատարող անձի թույլտվության՝ նախաքննության կամ հետաքննության տվյալները հրապարակելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը մեկ ամիս ժամկետով:

Միջազգային-հրավական
համագործակցության
վարչության դատախազ



Հ.Բաղայան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածների քաղվածքները, իմ իրավունքներն և պարտականություններն ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պարասխանադրության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝
Անահիտ Գյուլգարյան



«20».....06..... 2019թ.